ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043-Ա/10

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ք. Ահարոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ա որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ գույքի և նյութատեխնիկական բազայի ձեռքբերման համար «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **56 358 700** (հիսունվեց միլիոն երեք հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Անի թաղամաս 11-րդ փողոց 5/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900218000587
ՀՎՀՀ 05536355
Տնօրեն՝

Ք. Ահարոնյան
(ստորագրություն)

Կ.Տ

2022 թ. դեկտեմբերի [illegible]
կնքված N 2043 -Ն/10 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնարտադրական բազայով ապահովում	«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ գույքի և նյութատեխնիկական բազայի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքը ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Նոր գույքով և նյութատեխնիկական բազայով ապահովված ուսումնարան	01.09.2023թ.	56 358 700
		Ընդամենը՝				**56 358 700**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

Կազմակերպություն
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Անի թաղամաս 11-րդ փողոց 5/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900218000587
ՀՎՀՀ 05536355
Տնօրեն՝
Ք. Ահարոնյան
(ստորագրություն)

Հավելված 2

2022 թ. դեկտեմբերի -ին

կնքված N 2043 -Ն/10 պայմանագրի

«Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի նախահաշիվ

N/N	*Անվանում*	*Քանակ*	*Ընդամենը /ՀՀ դրամ/*
	Համակարգչային ապրանքներ		**10,649,500**
1	Մոնիտոր	20	
2	Մայր սալիկ	20	
3	Մշակիչ	20	
4	Հովացուցիչ	20	
5	Օպերատիվ հիշողություն	20	
6	Կոշտ սկավառակ	20	
7	Համակարգային բլոկ	20	
8	Սկավառակատար սարք	20	
9	Ստեղնաշար	20	
10	Մկնիկ	20	
11	Տպիչ /բազմաֆունկցիոնալ/	1	
12	Պրոյեկտոր	2	

13	Համակարգիչ	2	
14	Ցանցային մալուխ	350	
15	Անխափան սնուցմանսարք	20	
16	Սնուցման լար	20	
17	Արտաքին կրիչ	1	
18	Սկավառակներ՝ CD, DVD	50	
19	Էլեկտրոնային գրատախտակ	1	
20	Ցանցային բաժանարար	1	
21	Web տեսախցիկ	1	
22	Ականջակալ	20	
23	Բարձրախոս	1	
	Ռադիոմեխանիկական արհեստանոց		**7,074,400**
1	Ռադիոմեխանիկի աշխատասեղան իոնային լուսամփոփով	20	
2	Ձեռքի գայլիկոն	1	
3	Լաբորատոր սնման աղբյուր	20	
4	Զոդիչ ռադիոմեխանիկի	20	
5	Զոդիչի տակդիր	20	
6	Մուլտիմետր	20	
7	Լուսադիոդային ոսպնյակ	20	
8	Օսցիլոգրաֆ	1	
9	Հղկման փոքր հաստոց	1	

10	Ունիվերսալ ձայնային գեներատոր	2	
11	Զոդման ունիվերսալ սարք ռադիոմեխանիկի	2	
12	Ցեխնիկական սալիկի ունիվերսալ տաքացնող սարք	1	
13	Գայլիկոնային հաստոց	1	
14	Մամլակ	3	
15	Աթոռ	20	
16	Գրասենյակային սեղան	1	
17	Գրասենյակային աթոռ	1	
18	Գրապահարան	1	
19	Դանակ ռադիոմեխանիկի	20	
20	Ունելի ռադիոմեխանիկի	20	
21	Մետաղյա պահարան	2	
22	Բոռմեքենա	1	
23	Էլեկտրոնային մանրադիտակ ռադիոմեխանիկի	1	
24	Էլեկտրական օդի զտիչ	2	
	Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում մասնագիտության արհեստանոց		**9,915,300**
1	Ռադիոմեխանիկի աշխատասեղան իոնային լուսամփոփով	20	
2	Ձեռքի գայլիկոն	1	
3	Լաբորատոր սնման աղբյուր	3	
4	Լուսադիոդային ոսպնյակ	3	
5	Օսցիլոգրաֆ	1	
6	Հղկման փոքր հաստոց	1	

7	Տեխնիկկան սալիկի ունիվերսալ տաքացնող սարք	1	
8	Ուլտրաձայնային վաննա ռադիոմեխանիկի	1	
9	Էլեկտրոնային մուլտիմետր	2	
10	Թվային օսցիլոգրաֆ	1	
11	Մամլակ	3	
12	Շարժական սեղան	1	
13	Լաբորատոր աշխատանքի սեղան-պահարան օդափոխիչով	1	
14	Գրասենյակային սեղան	1	
15	Գրասենյակային աթոռ	1	
16	Գրապահարան	2	
17	Դանակ ռադիոմեխանիկի	20	
18	Ունելի ռադիոմեխանիկի	20	
19	Մետաղյա պահարան	1	
20	Բոռմեքենա	2	
21	Էլեկտրոնային մանրադիտակ ռադիոմեխանիկի	1	
22	Մուլտիմետր	10	
23	Ջերմաչափ	1	
24	Լազերային հարթաչափ	1	
25	Ձողակարկին	3	
26	Ձեռքի էլեկտրական մետաղահատ	1	
26	Մարտկոցով պտուտակահան	1	
27	Պլաստիկե խողովակների զոդիչ	1	

28	Զոդիչ ռադիոմեխանիկի	20	
29	Բանալիների /մանեկադարձիչ/	1	
30	Պտուտակահան	1	
31	Մուրճ	3	
32	Թիթեղահատ մկրատ	1	
33	Աքցան՝ մետաղալարերի մեկուսիչ շերտի հեռացնելու համար	1	
34	Հարթաշուրթի հավաքածու	1	
35	Կցաքցանների հավաքածու	1	
36	Ակցաններ հավաքածու	10	
37	Մետաղի համար նախատեսված գայլիկոնների հավաքածու	1	
38	Գլխիկներով բանալիների /մանեկադարձիչ/ հավաքածու	1	
39	Եռակցման ինվերտորային ապարատ	1	
40	Եռակցման դիմակ ավտոմատ լույսի զտիչով	1	
41	Ցուցադրական արևային վահանակ	1	
42	Արևային վերահսկիչ	1	
43	Արևային էներգիայի ձևափոխիչ	1	
44	Գելային մարտկոց	1	
45	Արևային ջրատաքացուցիչ	1	
46	Արևային վակումային խողովակ	1	
47	Պլաստիկ խողովակների հավաքածու	2	
48	Արևային ջրատաքացուցիչի հսկիչ վահանակ	1	
49	Ֆրանսիական երկարացնող թմբուկի ոլորուն	1	
50	Անկյունակտրիճ	1	

51	Գրասենյակային աթոռ	20	
52	Զողիչի տակդիր	20	
53	Էլեկտրական օդի զտիչ	1	
54	Ռադիոմեխանիկի աշխատասեղան իոնային լուսամփոփով	20	
	Փայտամշակման արհեստանոց		**12,808,300**
1	Աշխատասեղան փականագործական	2	
2	Աշխատասեղան ատաղձագործական	1	
3	Աշխատասեղան ատաղձագործական	5	
4	Աթոռ	20	
5	Թվային ծրագրավորման ֆրեզերային հաստոց	1	
6	Փայտի ռանդման հաստոց	1	
7	Փայտամշակման խառատային հաստոց	1	
8	Փայտամշակման սղոցման հաստոց	1	
9	Փայտամշակման ռեյսմուս հաստոց	1	
10	Հղկաթղթման փայտի հաստոց	1	
11	Էլեկտրական նրբասղոց փայտամշակման	1	
12	Փոշեհեռացման սարք	1	
13	Ժապավենային սղոցման հաստոց փայտամշակման	1	
14	Շաղափ հարվածային	1	

15	Անկյունային կտրող գործիք	1	
16	Սղոց շրջանաձև	1	
17	Ռանդա էլեկտրական փայտամշակման	1	
18	Էլեկտրական անկյունային սղոց	1	
19	Ձեռքի էլեկտրական ֆրեզ	1	
20	Փայտի շրջտաշման համար նախատեսված դանակների հավաքածու	2	
21	Փայտի շրջտաշման համար նախատեսված դանակների հավաքածու	3	
22	Մետաղյա պահարան /դարակաշար	1	
23	Ձեռքի նրբասղոց ատաղձագործական	10	
24	Ձեռքի նրբասղոց ատաղձագործական	10	
25	Սղոց	5	
26	Փայտի փորագրության աշխատանքների համար նախատեսվաված կարծր փայտատեսակների համար կտրող գործիքների	4	
27	Փայտի փորագրության աշխատանքների համար նախատեսվաված փափուկ փայտատեսակների համար կտրող գործիքների	1	
28	Փայտի փորագրության աշխատանքների համար նախատեսվաված փափուկ փայտատեսակների համար կտրող գործիքների	2	
29	Սեղմակներ	20	
30	Մամլակ ատաղձագործական	4	

31	Մանրասղոցի իրան	10	
32	Մուրճ	4	
33	Ձեռքի կարգավորվող ռանդա, մետաղական	5	
34	Դուրերի հավաքածու	5	
35	Բանալիների /մանեկադարձիչ/ հավաքածու	2	
36	Անկյունակ ալյումինե	5	
37	Շտիխելների հավաքածու	9	
38	Պտուտակահանների հավաքածու	4	
39	Բոռմեքենա	1	
40	Էլեկտրական օդի զտիչ	2	
41	Խոնավաչափ	1	
	Ոսկերչական արհեստանոց		**15,911,200**
1	Թրծման մուֆելային վառարան	1	
2	Բոր մեքենա ոսկերչական	5	
3	Ծայրակալների հավաքածու ոսկերչական	5	
4	Էլեկտրոնային կշեռք ոսկերչական	1	
5	Էլեկտրամագնիսա կան աշխատանքային սկզբունքով փայլեցման սարք	1	
6	Էլեկտրամագնիսա կան աշխատանքային սկզբունքով փայլեցման սարքի լցոն	1	
7	Բռնակ	2	

8	Մոմասրսկման սարք ոսկերչական /инжектор /	1	
9	Ջերմաճնշման սարք ոսկերչական /Вулканизатор/՝	1	
10	Մետաղյա շրջանակ ոսկերչական	1	
11	Կաղապար ոսկերչական	4	
12	Բռնիչ ոսկերչական	4	
13	Վակուումային ձուլման սարք ոսկերչական	1	
14	Կաղապար ոսկերչական	4	
15	Հատիչ ոսկերչական	2	
16	Մատանիների մեծացման- փոքրացման սարք	1	
17	Ռիգել ոսկերչական	3	
18	Ոսկերչական զնդան	4	
19	Նրբախարտոց ոսկերչական	12	
20	Հենակ երկու բռնիչներով ոսկերչական	4	
21	Պարուրակահան ոսկերչական	1	
22	Չափակարկին ոսկերչական	16	
23	Նշիչ ոսկերչական	16	
24	Ձեռքի մետաղական բռնիչ ոսկերչական	16	
25	Ոսկերչական փոքր մամլիչ	16	
26	Երկկողմանի փայլեցման սարք ոսկերչական	1	

27	Գլոցման սարք ոսկերչական/вальц/	1	
28	Լարաձգման սարք /филлер/ ոսկերչական	1	
29	Ոսկերչական զոդման սարք	5	
30	Ոսկերչական էլեկտրական զոդման սարք	4	
31	Մետաղյա պահարան	3	
32	Ոսկերչական զարդերի ցուցապահարան	3	
33	Գրապահարան	1	
34	Գրասենյակային սեղան	1	
35	Գրասենյակային աթոռ	1	
36	Մանրադիտակ	1	
37	Էլեկտրական փորագրիչ	1	
38	Սեղանի շարժական լամպ	22	
39	Խարտոց ոսկերչական եռանկյունաձև պրոֆիլի	10	
40	Խարտոց ոսկերչական քառակուսի պրոֆիլի	8	
41	Խարտոց ոսկերչական կլոր պրոֆիլի	8	
42	Խարտոց ոսկերչական ուղղանկյուն պրոֆիլի	12	
43	Խարտոց ոսկերչական կիսալուսնաձև պրոֆիլի	12	
44	Լոբզիկ ոսկերչական	16	
45	Ձեռքի գործիքների հավաքածու ոսկերչական՝ հարթաշուրթ, կլորաշուրթ, կծաքցան	8	

46	Մկրատ ոսկերչական	8	
47	Զոդման տակդիր, բռնիչով ոսկերչական	8	
48	Ունելի ոսկերչական	8	
49	Ունելի ոսկերչական	16	
50	Զոդման տիտանե ձող ոսկերչական	16	
51	Ռիգել ոսկերչական	3	
52	Մուրճ Մետաղյա ոսկերչական	8	
53	Մուրճ տեքտալիտ ոսկերչական	8	
54	Զնդան ոսկերչական	16	
55	"Ունիվերսալ" գործիքների հավաքածու /анка, дизайн-куб, шперак/ ոսկերչական	1	
56	Գերձայինային ավազան ոսկերչական/Ультразвуковая ванна/	1	
57	Այրիչ ոսկերչական	8	
58	Բռնիչ փայտից ոսկերչական	6	
59	Աշակերտական սեղան	20	
60	Աշակերտական աթոռ	40	
61	Ոսկերչական աշխատասեղան	16	
62	Աթոռ ոսկերչական	22	
63	Մետաղական աշխատասեղան ոսկերչի	3	
64	Հղկաթղթի բռնիչ ոսկերչական	16	

65	Էլեկտրական օդի զտիչ	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ		56,358,700

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Անի թաղամաս 11-րդ փողոց 5/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900218000587
ՀՎՀՀ 05536355

Տնօրեն՝

Ք. Աֆարոնյան
(ստորագրություն)

Կ.Տ